

Ըստուերի գորշ գորշ
Լըճակներուն մեջ:

Հայելիներուն
Հոգին պըրիսմակ
Կը դողայ համակ
Երբոր սարսըռուն
Աշտանակներուն
Ծիրանի ցուքեր
Կը սահին անոր
Վըճիտ ծալքերէն:

Հոգւոյս այլ մեջէն
Տակաւ կ'երկարի
Փափուկ արծաթի
Շաւիղ մը ձայնի:
Ու ճառագայթներ՝
Որ զիս կը կանչեն
Հոգւոյդ ալուցքէն
Կը հասնին ինծի:

Հապօ՛ն, կը մեկնին
Իմ անրջանքին
Թիթեռներն ամէն,
Ու միջոցին մեջ
Յուշիկ կը գըծեն
Շառայլ թըռիչքին
Ակօսն հեշտագին:

Ակօսն հեշտագին՝
Որ ձայնիդ կառչած
Կ'երկարի մինչեւ
Քու սրտիդ արեւ...

33. ՍԻՐԵՐԳ

Ճառագայթի պէս ոսկեվարս ու նրբին,
Երբոր ճամբէն կ'անցնի հըպարտ, լուսարագ,